ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

« 18 » 06 2018թ. N ԱԳ/8856-18

Ձեր 12.06.2018թ.
333-ի 2

**ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ Շ. ԴՈԴՈՅԱՆԻՆ**

**Հարգելի տիկին Դոյդոյան**

Ի պատասխան Ձեր՝ 12.06.2018 թ.-ի հարցման՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձի գործառույթները իրականացնում է հասարակայնության հետ կապերի բաժնի պետը:

Հասարակայնության հետ կապերի բաժնի պետի տվյալները տեղադրված են Նախարարության պաշտոնական կայքի համապատասխան բաժնում (http://www.mlsa.am/?page_id=13526):

Կից ներկայացնում ենք նաև իրավական ակտը, որով նշանակվել է ՏԱ համար պատասխանատու անձի՝ հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավարը:

Առդիր՝ 1 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատարող հասարակայնության հետ կապերի բաժին
Հեռ. 010 52 14 31

**0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ. (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30**
**http://www.mlsa.am info@mlsa.am**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

« 12 » 06 2018թ. N—11-Ա/3

## ՄԱՆԵ ՄԱԴՈՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 14-րդ և 84-րդ հոդվածների, <<Հանրային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 1821-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 12-րդ կետի <<է>> ենթակետով և հիմք ընդունելով Մ.Մադոյանի 2018 թվականի հունիսի 5-ի դիմումը՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Մանե Մադոյանին 2018 թվականի հունիսի 12-ից ընդունել աշխատանքի, որպես Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ:
2. Աշխատավարձը՝ սահմանել [redacted] ՀՀ դրամ:
3. Անձնակազմի կառավարման բաժնին՝ սույն հրամանի օրինակը հանձնել Մ.Մադոյանին:

Մ.ԹԱՆԴԻԼՅԱՆ